# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<10>>հուլիսի 2014թ

N 59

ք. Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի հուլիսի 1-ի N595-Ա որոշումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ*

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հաստիքացուցակը լրացնել հետևյալ նոր պաշտոններով՝

1) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (69-2.2-22)>>.

2) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ (69-3.1-13)

2. Ուժը կորցրած ճանաչել հետևյալ պաշտոնները՝

1) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (69-1.2-1)>>:

2) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ (69-3.1-6)

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանպահից:

Է.ՂԱՋԱՐՅԱՆ